ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք,
2-րդ փող./15 ,☎ (091)217105 ,E-mail zovashen1@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26» Փետրվարի 2013 թվականի N 7

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածը,

Համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 26 –ի երկրորդ արտահերթ նիստի օրակարգը հետևյալ բովանդակությամբ.

1.Զովաշեն գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2.Համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 18-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին .

3.Զովաշեն համայնքի 2013-2016 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ (5)	**Դեմ**	**Ձեռնպահ**
ԺՈՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ		
ԷՎԵԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ		
ԱՐՍԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ		
ՍԱՀԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք,
2-րդ փող./15 , ☎ (091)217105 ,E-mail zovashen1@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2013 թվականի N 8-Ն

ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 69-րդ հոդվածը համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի :

Կողմ (5)	**Դեմ**	**Ձեռնպահ**
ԺՈՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ		
ԷՎԵԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ		
ԱՐՍԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ		
ՍԱՀԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք,
2-րդ փող./15 , ☎ (091)217105 ,E-mail zovashen1@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26» Փետրվարի 2013 թվականի N 9-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 –Ի ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 3-րդ մասը, ինչպես նաև 2012թվականի դեկտեմբերի 6-ի . «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կարատելու մասին օրենքը.

Համայնքի ավագնին *որոշում է* .

1. Համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 26–ի «Կոտայքի մարզի Զովաշեն համայնքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին » թիվ 18-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1)1-ին կետի «բգ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«բգ.1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 25000դրամ

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «բդ» ենթակետով.

«բդ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ:

3) 4-րդ կետի 1-ին ենթակետը «ոգելից » բառից հետո լրացնել « և ալկոհոլային» բառերով.

4) 5-րդ կետի «ա» պարբերության « Տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ» բառերը փոխարինել «տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար » բառերով.

5) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գա » պարբերությունով

«գա». համայ քի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

6) 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր պարբերությունով.

« Զովաշեն գյուղական համայնքի անվանումը ֆիրմային անուն օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ».

2.Զովաշեն գյուղական համայնքի ավագանու այն որոշումները, որոնք կարգավորվում են սույն որոշումով, դրանում ևս կատարել փոփոխություններ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը

Կողմ (5)		**Դեմ**	**Ձեռնպահ**
ԺՈՐԱ	ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ՀԱԿՈԲ	ՀԱԿՈԲՅԱՆ		
ԷՎԵԼԻՆԱ	ՄԽԻԹԱՐՅԱՆ		
ԱՐՍԵՆ	ՍԱՖԱՐՅԱՆ		
ՍԱՀԱԿ	ՍԱՖԱՐՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզի Զովաշեն համայնք,
2-րդ փող./15 , ☎ (091)217105 ,E-mail zovashen1@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» Փետրվարի 2013 թվականի N 10- Ն

ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 53-րդ հոդվածը,

Համայնքի ավագնին *որոշում է*.

1. Հաստատել Զովաշեն համայնքի 2013-2016 թթ սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (5) **Դեմ** **Ձեռնպահ**

ԺՈՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ
ԷՎԵԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ
ՍԱՀԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված
Զովաշեն համայնքի ավագանու
26 փետրվարի 2013թ N10-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016 թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԶՈՎԱՇԵՆ 2013Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1. Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Զովաշեն գյուղը Արևմտյան Հայաստանից տեղահանված նախկին մշեցիների և ալաշկերտցիների կողմից վերաբնակեցվել է 1918-1921թթ., Սակայն գյուղի կենտրոնում հայտնաբերված 6-7-րդ դարերի եկեղեցու ավերակները վկայում են գյուղի ավելի վաղ ծագման մասին, սակայն այդ մասին որևէ պատմական տեղեկություններ չեն պահպանվել:

Գյուղը, կարծես գրկված Հատիս լեռան փեշերով, գտնվում է ծովի մակերևույթից 2030մ բարձրության վրա, նախկին շրջկենտրոնից 21կմ, մարզկենտրոնից 54 կմ հեռավորության վրա: Գյուղը գտնվում է Հատիս գյուղից Զառ անցնող տեղ. նշանակության ճանապարհի վրա: Կլիման Զովաշենում երկարատև ձմռան պայմաններում ցրտաշունչ է, իսկ ամռանը, անվանը բնորոշ՝ զով:

Գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին հաճախակի կրկնվող չորային կամ երաշտ տարիներին շատ է տուժում:

1.2. Ժողովրդագրություն

Գյուղում ապրում են 190 բնակիչ, որոնց 97%-ը հայեր են, 3%-ը քրդեր: Տղամարդիկ կազմում են բնակչության 47%-ը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն՝

1. երեխաներ (0-5 տ) - 13
2. դպրոցական (6-16 տ) - 18
3. 17 - 62 տարեկան - 139
4. 63 –ից բարձր 24
5. թոշակառուներ - 23
6. հաշմանդամներ - 2
7. միակողմանի ծնողազուրկ երեխաներ - 3
8. աշխատունակներ - 85
9. ընտանիքների թիվը - 40
10. գրանցվածներ »Փարոս« ընտ. նպաստ համակարգում - 5
11. գրանցված ընտրողների թիվը - 128

1.3. Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարումը իրականացվում է քառամյա ժամանակահատվածով ընտրված համայնքի ղեկավարի կողմից: Համայնքի ղեկավարը կազմավորել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

- տեղակալ - 1 դրույք
- աշխատ. քարտուղար - 1 դրույք
- առաջատար մասնագետ հաշվապահ- 1 դրույք
- Առաջին կարգի մասնագետ - 1 դրույք
- Հավաքարար պահակ - 1դրույք

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

1.4. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.97թ.-ի թիվ 51 որոշմամբ և բերված է հավելված 2-ում:

Համայնքի գույքը՝ կառուցված 1950-60թթ. գտնվում է ֆիզիկական վատթար վիճակում: Գրադարանը և գյուղապետարանը հարմարեցված են ակումբի շենքում:

Առանց ռելիեֆին բնորոշ ինժեներական լուծումների և օրվա կարգավորիչ ջրամբարի 1967-69թթ.-ին կառուցված խմելու ջրի ներքին ցանցը, մասնակի վերակառուցվել է 2007թ:

1.5. Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

Համայնքի արոտավայրերի մեծ մասը, լինելով թեքությունների վրա, հատկապես գարնան կտրուկ ձնհալների ժամանակ գտնվում է էռոզիայի և հողատարության վտանգի տակ:

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքի վարչական տարածքում դեռևս խորհրդային տարիներին առանձնացվել է հատուկ տարածք՝ գյուղից շուրջ 2,5 կմ հեռավորության վրա: Սակայն համայնքում աղբահանության կենտրոնացված համակարգի բացակայության պատճառով տնային տնտեսությունների կողմից անհատական կերպով կատարվող աղբահանության հետևանքով աղտոտված են համայնքի վարչական սահմաններում գտնվող շուրջ 10 հա արոտավայր, կամ որ առավել վտանգավոր է, աղբը թափվում է հեղեղատարները:

Ոռոգման ցանցի բացակայությունը, տարածաշրջանին բնորոշ չորային կլիման մեծացնում են անապատացման վտանգը:

1.6. Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 50 առանձնատուն՝ 5900 քմ բնակ. մակերեսով, որոնց շուրջ 80%-ը կառուցվել են 1960-ական թթ.-ին և ավելի վաղ, ֆիզիկապես մաշված են և զուրկ կենցաղային պայմաններից: Վերջին 30 տարվա ընթացքում կառուցվել և վերանորոգվել են 6 առանձնատուն:

Վթարային դարձածառանձնատների թիվը - 7

Ոչ բնակելի տարածքներ - 8500քմ

1.7. Հողատարածքների օգտագործում

Համայնքի վարչական տարածքը - 1809.9 հա, այդ թվում

- վարելահողեր - 556 հա
- խոտհարք - 139 հա
- արոտավայրեր - 936 հա
- անօգտագործելի հողեր - 127 հա
- լճեր, ջրանցքներ - 6.4 հա
- դաշտային ճանապարհներ - 10,1 հա
- արտադրական մաս - 6,1 հա
- Հատուկ պահպանվող տարածքներ -10.3
- գերեզմանատուն - 1,0 հա
- տնամերձ հողեր - 21 հա
- դպրոց - 1,02 հա
- հուշարձան - 0,02 հա
- գյուղամիջյան փողոցներ - 2,6 հա
- սեփականաշնորհված հողեր - 485.0 (վարելահող 369, խոտհարք - 116,0) հա
- մեկ հողաբաժնի չափը - 5,9 հա

- պետ. պահուստային հողեր - 1291,4 հա, որից
- գյուղ նշանակության - 1273 հա

1.8. Գյուղատնտեսություն

Համայնքի գյուղ. տնտեսությունները գրեթե ամբողջությամբ զբաղվում են դաշտավարությամբ և անասնապահությամբ: Վարելահողերը, լինելով ոչ ոռոգելի , 4-րդ և 5-րդ կարգի, չեն ապահովում մշակվող ցորենի, գարու, հաճարի կայուն բերք: Վերջին տարիներին բնության մատուցած անակնկալները (ցրտահարություններ, կարկտահարություններ, երաշտներ, կրծողներով վարակված մասսայական տարածքներ) էլ ավելի են դժվարեցնում գյուղմթերքների արտադրությունը, դա զգացվում է նաև անասնապահության բնագավառում: Մսուրային երկարատև շրջանին հաջորդում է արոտավայրերի շուտ չորացման պատճառով արոտի կարճ շրջանը:

Անասնապահական մթերքների արտադրությանը խոչընդոտում է նաև արոտավայրերի ջրարբիացված չլինելը:

Տոհմային աշխատանքների բացակայության պատճառով կտրուկ ընկել է կաթնատվությունը և մսատվությունը:

1.9. Կրթություն

Գյուղն ունի մեկ հիմնական դպրոց, ուր սովորում են 10 աշակերտ: Դպրոցն ունի 13 աշխատատեղ: Մեկ ուսուցչին ընկնում է 1աշակերտ:

Դպրոցի ոչ տիպային շենքը կառուցվել է 1964թ.-ին, այն մինչև օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Հատկապես անմխիթար վիճակում է տանիքը, բացակայում են ջրամատակարարում, մարզադահլիճ, սպորտային խաղահրապարակ:

Դպրոցը ապահովված է մասնագետ մանկավարժական կադրերով:

1.10. Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքն ունի 1 ակումբ, հին և կիսավթարային վիճակում, որի պատճառով համայնքը հասարակական միջոցառումներ, կինո, թատրոն կազմակերպելու հնարավորություն չունի: Գործող գրադարանը ունի խնամքով պահպանված 6200 կտոր գիրք, գրադարանի զբաղեցրած տարածքը գտնվում է ոչ բարվոք վիճակում:

Մարզահրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից, չկան սպորտային խմբակներ:

1.11. Առողջապահություն

2007թ վարչական շենքի 32քմ տարածքով սենյակի հիմական նորոգումից և անհրաժեշտ գույք, սարքավորումներով ապահովումից հետո գյուղն ունի մեկ բուժկետ: : Բուժկետն ունի 1 աշխատող:

1.12. Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքի վարչական տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների մեծ չափով (935 հա) առկայությունը, որը բյուջեի եկամուտների ավելացման երաշխիք է:

- Համայնքի գյուղ. տնտեսություններին պատկանող հողակտորների համեմատաբար խոշոր չափեր (5-15 հա), որի շնորհիվ ցանքաշրջանառության և ագրոտեխնիկական կանոնների կիրառմամբ հնարավոր է բերքատվության բարձրացում:

1.13. Համայնքի թույլ կողմերը

- Համայնքի միջհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակ, ձմռանը առատ ձյան պատճառով անանցանելի լինելը:
- Խմելու ջրի ջրամատակարարման համակարգի անմխիթար վիճակը:
- Ծնելիության նվազում, բնակչության 24% թոշակառուների առկայություն:

1.14. Համայնքի հնարավորությունները

- Սևաբերդի ջրամբարի վերագործարկման և պոմպակայանի վերակառուցման դեպքում շուրջ 350 հա հողատարածքների ոռոգման հնարավորություն:
- Համայնքը գտնվում է Հատիս լեռան լանջին, որի վրա առատ ձյան շերտը երկար է պահպանվում, որը կարող է գրավել ձմեռային սպորտաձևերի սիրահարներին, դառնալով ձմեռային ակտիվ հանգստի գոտի:
- Գտնվելով Գեղամա լեռների հեռագնա արոտավայրերի ճանապարհների խաչմերուկում, համայնքը կարող է դառնալ անասնապահական մթերքների (օր., կաթ) հավաքման և նախնական կամ վերջնական մշակման կենտրոն:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը

Բարեփոխումների անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները: Գյուղը դարձնել գեղեցիկ և բարեկարգ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Զարգացնել գյուղատնտեսությունը, անասնապահությունը համայնքում:
- Համայնքին ապահովել կայուն և շուրջօրյա ջրամատակարարմամբ, կանխել սուր վարակիչ հիվանդությունները:
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

Համայնքային կենտրոնի, վարչական շենքի համարի շինության ձեռք բերում, վերանորոգում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Գյուղապետարանը ներկայումս գործում է ակումբ-գրադարանի շենքի մի հատվածում, որը աշխատանքային անհարմարությունից բացի իր զբաղեցրած տարածքի պատճառով խոչընդոտում է ակումբը բնակչության համար անհրաժեշտության դեպքում հանդիսությունների սրահ օգտագործելուն : վարչական շենքի համարի շինության ձեռք բերում հնարավորություն կտա բարելավել գյուղապետարանի աշխատակիցներ աշխատանքային պայմանները, ինչպես նաև ազգաբնակչության համար այդքան կարևոր հանդիսությաների կազմակերպման համար ապահովել պայմաներ:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են՝

- Ապահովել համայնքի բնակչության հանգստի կազմակերպումը:
- Բարելավել գյուղապետարանի աշխատակիցներ աշխատանքային պայմանները:

Ծրագրի իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝

- Ապահովել ծրագրի իրականացման գնման գործընթացը:
- Ծրագրով նախատեսված գործընթացը սկսել մինչ 2013թ. ապրիլի 25-ը,

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ կբարելավվի համայնքի բնակչության սպասարկումը, կապահովի գյուղապետարանի աշխատակիցների համար բարեկարգ միջավայրում աշխատանքների կազմակերպումը, կապահովի համակարգչային տեխնիկայի և սարքավորումների բնականոն աշխատանքը. Հնարավորության կընձեռնվի վերագործարկել ակումբի աշխատանքը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այն կծառայի որպես հանդիսությունների սրահ

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական հաշվարկներով, շենքի ձեռք բերման և վերանորոգման արժեքը կկազմի մոտ 4.500,0 հազ. դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

Համայքի մարզահրապարակի կառուցում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Համայնքում մարզահրապարակ որպես այդպիսին գոյություն չի ունեցել , այն հարմարացվել է դպրոցի հարակից տարածքում;

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են՝

- Ապահովել համայնքի բնակչության սպորտային հանգստի պայմանները
- Խթանել համայնքում ակտիվ հանգիստը և առողջ ապրելակերպը;

Ծրագրի իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝

- Համագործակցել շահագրգիռ կազմակերպություններ հետ ծրագրի իրականացման և ֆինանսավորման համար:
- Ապահովել համայնքի կողմից անհրաժեշտ ներդրումը:
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շինարարական կազմակերպությունը:
- Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները (սպորտհրապարակի համար հատկացված հողատարածքի հարթեցման այնուհետև բարեկարգման) սկսել մինչ 2014թ. մայիսի 20-ը և ավարտել մինչև 2014թ. օգոստոսի 1-ը, սպորտհրապարակը հանձնելով շահագործման:
-

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը էապես կբարելավվի բնակչության ֆիզիկական կուլտուրաի զարգացումը

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 3600 քմ ընդհանուր մակերեսով սպորտ---- հրապարակի կառուցման և կահավորման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 800,0 հազ. դրամ:

ԾՐԱԳԻՐ 3
Խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերափոխում, օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցում

Ծրագրի հիմնավորումը և նկարագրությունը

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1967-69թթ.-ին՝ առանց օրվա կարգավորիչ ջրամբարի, ռելիեֆին համապատասխան ինժեներական լուծումներ տրված չեն: Վերջին տարիներին համայնքը և հարևան համայնքները սնող »Զարքազի« աղբյուրի ջրի ծավալները նվազում են: Ներքին ցանցում ջրի անհավասարաչափ բաշխման պատճառով զգալի են ջրի կորուստները:

Ընդառաջելով բնակչության դիմումներին, սույն ծրագրով առաջարկվում է վերփոխել ջրամատակարարման համակարգը, կառուցել օրվա կարգավորիչ ջրամբար:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմանական նպատակներն են՝

1. Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով:
2. Նվազեցնել թաղամասերի միջև ջրամատակարարման անհամաչափությունը:
3. Կրճատել ջրի կորուստները:
4. Կանխել բնակչությանը չվարակազերծված ջրամատակարարումը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրները՝

1. Մինչև 2015թ. հունիսի 1-ը մշակել համայնքի խմելու ջրի ներհամայնքային համակարգի բարեփոխման, օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցման ծրագիր համագործակցելով դոնոր կազմակերպությունների հետ:
2. Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

3. Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:
4. 20015թ.-ին իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքները:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը
1. Համայնքն ամբողջությամբ կապահովվի կայուն ջրամատակարարմամբ:
2. Շուրջ 70%-ով կնվազեն ջրի կորուստները:

ԾՐԱԳԻՐ 3

Ակումբի, գրադարանի շենքի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Համայնքի 1964թ.-ին կառուցված ակումբի շենքում են տեղակայված նաև գրադարանը և գյուղապետարանը, 2012թ վերանորոգեց տանիքը իսկ ներքին հարդարումը գտնվում է վթարային վիճակում: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ համայնքի բնակչությունը չունի աշխատանքից ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայր:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Նպատակներն են՝
1. Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը:
2. Ակումբի դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների, ավագանու նիստերի, համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար:
3. Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ:
4. Տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար:
5. Բարելավել գյուղապետարանի աշխատանքային պայմանները,

Խնդիրներ՝
1. Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
2. Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շինարարական կազմակերպությունը:

Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները (ներքին հարդարման աշխատանքներ) սկսել մինչ 2013թ. հունիսի 15-ը և ավարտել մաս առ մաս 2013-2016 թվականների ընթացքում

Ծրագրից սպասվող արդյունքները

- Բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր և բովանդակալից անցկացնել:
- Ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար:

2013-2016թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՎ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները				Պատաս-խանա-տուն	Ծանո-թություն
					համայն քի բյուջե	դոնոր կազմ.	այլ (պետ. բյուջե և այլն)	2013թ. Ծավալ/ Ֆին. միջ.	2014թ. Ծավալ/ Ֆին. միջ.	2015թ. Ծավալ/ Ֆին. միջ.	2016թ. Ծավալ/ Ֆին. միջ.		
1.	Վարչական շենքի համար շենքի ձեռք բերում, վերանորոգում	քմ	220	4.500.0	2000.0	2500.0		4500.0				Համայնքի ղեկավ.	
2.	Խմելու ջրի ներքին ցանցի բարեփոխում, ՕԿՋ կառուցում	խմ	100	25350.0	350.0	-	25350,0	100խմ/ 25350,0				Համայնքի ղեկավ.	
3.	Համայքի մարզահրապարակի կառուցում	քմ	3600	800.0	800.0	1000.0			3600/ 1800.0			Համայնքի ղեկավ	
4.	Համայնքային կենտրոնի ակումբի, գրադարանի շենքի վերանորոգում	քմ	400	20000,0			20000,0				400քմ/ 20000,0	Համայնքի ղեկավ.	
5.													
6.													
7.													
8.													
9.													

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Կոտայքի մարզի Զովաշեն համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

(հազ. դրամ)

Հ/հ Մուտքերի անվանումը	2011թ. փաստ	2012թ. փաստ.	2013թ. նախատ	2014թ. կանխ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, *	6147.9	5858.8	6028.1	6146.0	6156.0	6170.0
1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ,	1241.7	1223.0	1278.1	1296.0	1296.0	1296.0
1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝	1153.0	1122.8	1152.9	1156.0	1156.0	1156.0
Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	12.9	14.9	4.9	6.0	6.0	6.0
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	1140.1	1107.9	1148.0	1150.0	1150.0	1150.0
1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	88.7	100.2	125.2	140.0	140.0	164.0
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	88.7	100.2	125.2	140.0	150.0	140.0
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, այդ թվում՝	3500.0	3500.0	3500.0	3500.0	3500.0	3500.0
3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝	1406.2	1135.8	1250.0	1350.0	1350.0	1350.0
3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ,	1106.2	1135.8	1250.0	1350.0	1350.0	1350.0
Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	1106.2	1135.8	1250.0	1350.0	1350.0	1350.0
3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,	300.0					
Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	2297.5	3040.5				

*) Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2011թ. փաստ	2012թ. փաստ	2013թ. փաստ	2014թ. կանխ	2015թ. կանխ	2016թ. կանխ
	1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	1810,8	1810,8	1810,8	1810,8	1810,8	1810,8
2	Բնակչության թիվը	մարդ	196	193	190	193	197	203
3	Ծնունդը	մարդ	3	2	-	4	5	7
4	Մահացությունը	մարդ	6	2	-	1	1	1
5	Աշխ. ռեսուրսները, այդ թվում	մարդ	82	78	85	76	78	80
6	ա) զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	64	65	67	65	67	70
7	գյուղատնտեսություն		52	51	54	51	52	52
8	այլ		12	14	13	14	15	18
9	Գործազրկության մակարդակը	%	12,6	12,4	12.2	12	11,7	11,5
10	Առևտրի և սպասարկումների օբյեկտների թիվը	հատ	-	-	-	1	1	1
11	Պահուստային հողեր	հա	1280,5	1280,5	1280,5	1280,5	1250,5	1250,0
12	Պահուստային հողերի օգտագործման մակարդակ	%	50,0	50,0	55,0	60.0	65,0	70,0
13	Խմելու ջրի ներհամայնքա -յին ցանցի երկարությունը	կմ	4,7	4,7	4,7	4,7	4,7	4.7
14	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	-	-
15	Ոռոգման համակարգի տակ գտնվող հողեր	հա	-	-	-	-	-	-
	Ներհամայնքային փողոցնե րի և ճանապարհների երկ. -ը	կմ	2,8	2,8	2,8	2,8	2,8	2,8
	Զբաղեկարգված փողոցների և ճանապարհների երկար.-ը	կմ	2,6	2,6	1,5	1,5	1,2	1,2
16	Բնակ. ֆոնդ, այդ թվում	շենք/ հազ.քմ	50/ 3,87	50/ 3,87	50/ 3,87	51/ 4,0	52/ 4,2	53/ 4,3
17	• համայնքային		-	-	-	-	-	-
18	• մասնավոր		3,87	3,87	3,87	4,0	4,2	4,3
19	Բնակկարիքավոր ընտանիք ների թիվը	ընտ.	3	3	3	5	6	7
20	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	200	200	200	220	220.0	220.0
21	Ջրի կորուստները ցանցում	%	40	40	45	45	45	25
22	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	17	14	11	11	14	15
23	Երեխաների թիվը մանկապ.-ում	մարդ	-	-	-	-	-	-
24	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	6	6	6	6	6	6
25								
26.								
27.								

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը	45, այդ թվում
ա. անհատական տնտեսություն	45
բ. կոլեկտիվ տնտեսություն	--
գ. պետական տնտեսություն	--
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը	
ա. ցորեն	20108.5.ցենտներ
բ. գարի	632.7
գ.հաճար	1722.2
դ. կարտոֆիլ	-
զ. բանջարաբոստ. կուլտ	-
է . միրգ	-
ը. կաթ	1880
թ. միս	290
ժ. բուրդ	90
ի. ձու	100000 հատ
թ. մեղր	1,0
3. Ցանքատարածությունները	
ա. հացահատիկ	307.9 հա
բ. կարտոֆիլ	-
գ. բանջարաբոստ. կուլտ.	- -
ե. մրգատու այգի	-
զ. առվույտ	-
ը. կորնգան	103.6
թ. միամյա խոտեր	-
4. Անասնագլխաքանակը, հատ	
ա. խոշոր եղջեր. անասուններ	365գլուխ
այդ թվում՝ կովեր	144
բ. մանր եղջեր. անասուններ	496
այդ թվում՝ մայրեր	401
գ. խոզեր	13
այդ թվում՝ մայրեր	5
դ. թռչուններ	522 թև
այդ թվում՝ հավեր	423
ե. մեղվաընտանիքներ	21

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ

այդ թվում՝

ա. համայնքային սեփականության	բ. մասնավոր սեփականության	
թրթռուրավոր տրակտոր	թրթռուրավոր տրակտոր	9
անիվավոր տրակտոր	անիվավոր տրակտոր	10
հացահատիկային կոմբայն	հացահատիկային կոմբայն	2
խոտհնձիչ կոմբայն	խոտհնձիչ կոմբայն	1
բեռն. ավտո. տարբեր մակնշի	բեռն. ավտո. տարբեր մակնիշի	8
տրակտորային կցասայլեր	տրակտորային կցասայլեր	6
գութաններ	գութաններ	8
կուլտիվատորներ	կուլտիվատորներ	-
շարքացաններ	շարքացաններ	4
խոտ հակավորող մեքենաներ	խոտ հակավորող մեքենաներ	5
պարարտանյութ ցրիչ	պարարտանյութ ցրիչ	1
կերամանրիչ	կերամանրիչ	1
այլ	այլ	-

Հավելված 1

ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՅՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Հավելված 2

ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Համայնքի վարչական շենք, ակումբ, գրադարան
2. Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ
3. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
4. Հուշարձան
5. Գերեզմանատուն
6. Պահեստ

հավելված N1
Զովաշեն գյուղական համայնքի
ավագանու 26.02.2013թ. N 8-Նորոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01.01.2012 թ. -31.-12.2012 թ. ժամանակահատվածի համար)

1. Համայնքի անվանումը ___**Զովաշենի գյուղական համայնք**_____
2. Փոստային հասցեն ___**Կոտայքի մարզ գյուղ Զովաշեն**_____
3. Համայնքի տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման ___**07 028**_____
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը ___**Աբովյանի ՏԳԲ**___
5. Համայնքի՝ Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը ___**900106213011**____
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (համայնքի բյուջե՝ 2)
7. Չափի միավորը՝ հազար դրամ

, 26 փետրվարի 2013 թ.

Կ. Տ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____**Ս.ՍԱՖԱՐՅԱՆ**_____

(Ա. Ա. Հ.)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01.01. 2012 թ. 31. 12- 2012 թ. ժամանակահատվածի համար)

			Տարեկան հաստատված			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
		NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝ վարչական մաս	այդ թվում՝ ֆոնդային մաս	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝ վարչական մաս	այդ թվում՝ ֆոնդային մաս	Ընդամենը (ս.11+ս.12)	այդ թվում՝ վարչական մաս	այդ թվում՝ ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8	9	10	11.0	12
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**		6061.9	6061.9	0.0	6061.9	6061.9	0.0	5858.8	5858.8	0.0
1100	**1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում՝**	**7100**	1361.9	1361.9	X	1361.9	1361.9	X	1223.0	1223.0	X
1110	**1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝**	**7131**	1266.9	1266.9	X	1266.9	1266.9	X	1122.8	1122.8	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և		14.9	14.9	X	14.9	14.9	X	14.9	14.9	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		1252.0	1252.0	X	1252.0	1252.0	X	1107.9	1107.9	X
1120	**1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝**	**7136**	95.0	95.0	X	95.0	95.0	X	100.2	100.2	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		95.0	95.0	X	95.0	95.0	X	100.2	100.2	X
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության**	**7145**	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
1131	Տեղական տուրքեր, այդ թվում՝	71452	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,		0.0		X	0.0		X	0.0		X
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, այդ թվում՝**	**7300**	3500.0	3500.0	0.0	3500.0	3500.0	0.0	3500.0	3500.0	0.0
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝**	**7331**	3500.0	3500.0	X	3500.0	3500.0	X	3500.0	3500.0	X
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ**	**7400**	1200.0	1200.0	0.0	1200.0	1200.0	0.0	1135.8	1135.8	0.0
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝**	**7415**	1200.0	1200.0	X	1200.0	1200.0	X	1135.8	1135.8	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		1200.0	1200.0	X	1200.0	1200.0	X	1135.8	1135.8	X